



ԶԱԿԵՆ ՄԻՐԶՈՅԱՆ
ԱրդՀ տնտեսաիրավաբանական ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասպիրանտ

**ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Տնտեսության կայունացման, առաջընթացի ապահովման, տարաբնույթ խնդիրների լուծման գործում չափազանց կարևոր դեր ունի երկրի հարկաբյուջետային համակարգը: Այն, բնականաբար, ենթադրում է հարկաբյուջետային այնպիսի քաղաքականության մշակում և իրականացում, որը կնպաստի ծեռնարկատիրական ակտիվության մեծացմանը, ներդրումային գործընթացի աշխուժացմանը, ազատ մրցակցության հաստատմանը և, վերջին հաշվով, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը: Հարկաբյուջետային քաղաքականության ռազմավարությունը պետք է ելնի երկրի տնտեսական զարգացման գերակայություններից, ուղղված լինի հարկային այնպիսի համակարգի ձևավորմանը, որը կստեղծի տնտեսական աճի բարձր ու կայուն տեմպերի, ներդրումների իրականացման և տնտեսության արտահանող ձյուղերի զարգացման բարենպաստ միջավայր, այլ կերպ ասած՝ միտված լինի տնտեսության զարգացման անհրաժեշտ նախադրյալների առաջացմանը, որոնցից բխող ընդհանուր տնտեսական քաղաքականությունն էլ կապահովի ցանկալի արդյունք:

Հիմնաբառեր. *հարկաբյուջետային քաղաքականություն, տնտեսական քաղաքականություն, հարկային բարեփոխում, պետական քաղաքականություն, բյուջետային համակարգ, համախառն ներքին արդյունք, տնտեսական աճ, տնտեսական գործընթաց, պետական պարտք, միջնաժամկետ ծախսերի ծրագիր, մակրոտնտեսական ցուցանիշներ, բյուջետային գործընթաց*

Տնտեսության կայունացման, առաջընթացի ապահովման, տարաբնույթ խնդիրների լուծման գործում չափազանց կարևոր դեր ունի երկրի հարկաբյուջետային համակարգը: Այն, բնականաբար, ենթադրում է հարկաբյուջետային այնպիսի քաղաքականության մշակում և իրականացում, որը կնպաստի

տի ձեռնարկատիրական ակտիվության մակարդակի բարձրացմանը, ներդրումային գործընթացի աշխուժացմանը, ազատ մրցակցության հաստատմանը և, վերջին հաշվով, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը՝ առավել բարենպաստ պայմաններ ստեղծելով երկրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնման, ներդրումային գործընթացների ակտիվացման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար: Այլ խոսքով՝ նշված նպատակների համախուժված պետական կառավարման այն ամբողջությունն է, որի համակարգված և հետևողական իրականացման արդյունքում միայն կարելի է ապահովել պետական կարգավորման կարևոր լծակների գործադրման նպատակամետությունն ու արդյունավետությունը:

Հարկային քաղաքականությունը, լինելով տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասը, պետք է բխի մակրոտնտեսական հավասարակշռության, ազատ մրցակցության և այլ տնտեսական օրենքներից: Միաժամանակ, այդ քաղաքականությունը էապես առանձնանում է տնտեսական քաղաքականության այլ բնագավառներից՝ դրանց հետ պահպանելով նաև սերտ փոխկապվածություն: Տնտեսական գործունեության համար հարկաբյուջետային բարենպաստ դաշտի ստեղծման, հարկման օբյեկտների ու սուբյեկտների սահմանման, հարկերի դրույքաչափերի կարգավորման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումը, ըստ էության, երկրում արդյունավետ հարկաբյուջետային համակարգի կառուցման հիմնական նախադրյալներն են:

Հարկային բարեփոխումների ծրագիրը պետք է սահմանի հարկային ոլորտում պետական քաղաքականության մշակման հիմնական սկզբունքները, դրա իրականացման ծրագրային հիմունքները և կարգավորի դրանց վերաբերող հարաբերությունները: Այն պետք է ներառի ծրագրի հիմնական խնդիրները, համապատասխան միջոցառումների իրականացման ծավալները և ժամանակացույցը, բյուջետային հատկացումների և դրանց արդյունավետ օգտագործման սկզբունքները, ինչպես նաև աշխատանքների կատարման առաջնայնությունները:

ԼՂՀ հարկաբյուջետային քաղաքականության ձևավորման առանձնահատկությունների բացահայտմանը, դրա վրա ազդող բազմաբնույթ գործոնների գնահատմանը, դրանցով պայմանավորված հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված հետազոտությունները զգալիորեն նպաստեցին տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգման և արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ մեթոդաբանական և մեթոդական հիմքերի ստեղծմանը: Այդուհանդերձ, տնտեսական գործընթացների շարունակվող փոփոխականությունը և հանրապետության սոցիալ-տնտեսական անկայուն վիճակը, ակնհայտորեն, պահանջում են մշակվող և իրականացվող հարկային քաղաքականության կատարելագործում, այդ ուղղությամբ արդյունավետ տնտեսական քաղաքականության իրականացում:

Շուկայական հարաբերությունների դեպքում պետության կողմից լուծման ենթակա խնդիրները պայմանավորում են պետության գործառույթները: Նշված խնդիրների լուծման հարցում առանձնահատուկ է հարկային քաղաքականության դերը, որը բյուջետային միջոցների ձևավորման ու օգտագործման բնագավառում պետության նպատակաուղղված գործունեությունն է: Այն տնտեսության մակրոտնտեսական հավասարակշռության ձեռքբերման կարևոր գործիք է, քանի որ հարկերի և պետական ծախսերի միջոցով հնարավոր

րություն է ստեղծվում խթանելու գործարար ակտիվությունը, ազդելու զբաղվածության և ինֆլյացիայի վրա:

Ընդհանուր տնտեսական զարգացման առումով խիստ կարևոր է հարկաբյուջետային այնպիսի քաղաքականության մշակումն ու իրականացումը, որն առավել բարենպաստ պայմաններ կստեղծի երկրում տնտեսավարող սուբյեկտների գործունեության շրջանակների մեծացման, ներդրումային գործընթացների ակտիվացման, հավասար մրցակցային դաշտի ձևավորման և ընդլայնված վերարտադրության ապահովման համար: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այդ քաղաքականությունը տնտեսության պետական կարգավորման խիստ կարևոր լծակ է, որի նպատակամետ և արդյունավետ օգտագործումը թույլ կտա ապահովել տնտեսական զարգացման ցանկալի արդյունքներ:

Ըստ էության, հարկաբյուջետային քաղաքականությունը տնտեսական գործունեության տարբեր բնագավառներում հարկ վճարողների և հարկման ենթակա եկամուտների որոշման, հարկատեսակների, դրանց դրույթաչափերի սահմանման, հարկերի գանձման ու վճարումների կանոնակարգման, դրանց օրենսդրավական ապահովվածության, ինչպես նաև այդ գործընթացների ներքին ու արտաքին կապերի և բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուրների ամբողջական համակարգ է: Կախված տնտեսական բազիսից և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից՝ տարբեր երկրներ տարաբնույթ լուծումներ են տալիս վերոհիշյալ խնդիրներին: Տնտեսության և հարկման համակարգի համարժեքությունը բնութագրվում է դրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապով, քանի որ մեկի անկատարությունը անխուսափելիորեն հանգեցնում է մյուսի անկանոն զարգացման: Այդ առումով, էական նշանակություն ունի հարկային համակարգի որակական կազմի և կառուցվածքի հստակ սահմանումը:

Ընդհանուր առմամբ, բյուջեն որոշակի ժամանակահատվածի եկամուտների և ծախսերի նախահաշիվն է: Առավել ընդհանուր բնութագրմամբ՝ այն ձևավորվում է ձեռնարկությունների կողմից համապատասխան բյուջեներ մուծվող հարկերից և այլ պարտադիր վճարումներից:

Անշուշտ, բյուջետային համակարգի վերլուծության մեջ պետք է արտացոլվեն վերը նշված հիմնախնդիրները, ինչը կարևոր նշանակություն ունի ԼՂՀ տնտեսության վերաբերյալ ամբողջական գնահատականներ տալու, տնտեսության զարգացման ընթացքը և միտումները ոչ միայն տնտեսավարող առանձին սուբյեկտների, այլև ինստիտուցիոնալ օղակների կողմից առավել հստակ պատկերելու համար: Այսինքն՝ բյուջեն, դիտարկվելով որպես առաջիկա ժամանակահատվածի համար պետության գործունեության հիմնական սոցիալ-տնտեսական ծրագիր, պետք է մշտապես լինի յուրաքանչյուր կազմակերպության քննության առարկա, քանի որ դրանով է պայմանավորված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը, որի մի մասնիկն է կազմակերպությունը:

Բյուջետային հարաբերությունների առանցքը հարկային քաղաքականությունն է, քանի որ ծախսերի կատարման կարևորագույն պայմանը համապատասխան ծավալով եկամուտների առկայությունն է: Իր հերթին՝ եկամուտների ավելացման խնդիրը կարող է լուծվել հարկային համապատասխան քաղաքականությամբ Դրա հիմքում պետք է հարկերի ֆիսկալ և կարգավորիչ գործառնությունների զուգակցումը լինի, այլապես, դրանց միջև հաշվեկշռման բացակայությունը տնտեսության զարգացման արգելակման պատ-

ճառ կարող է դառնալ: Հարկային քաղաքականությունը պետք է պայմանավորված լինի հասարակության և տնտեսության զարգացման գերակայությունների ու շահերի ներդաշնակեցմամբ:

Փաստորեն, տնտեսության պետական կարգավորման գործում չափազանց մեծ է պետական բյուջեի դերը, որը հիմնավորված տնտեսական քաղաքականության պարագայում դառնում է տնտեսության զարգացման գլխավոր գործիք:

Տնտեսության կայուն զարգացման կարևորագույն նախադրյալներից մեկը արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականությունն է, որի կիրառման դեպքում պետական բյուջեի եկամուտները ծածկում են փաստացի ծախսերը, կամ բյուջետային պակասուրդը կազմում է ՀՆԱ թույլատրելի տոկոսը:

Ակնհայտորեն, նշված խնդիրների լուծմանը պետք է ուղղված լինի տնտեսության հարկաբյուջետային կարգավորումը, որը կառավարության կողմից իրականացվող միջոցառումների համալիր է՝ ուղղված պետական եկամուտների և ծախսերի կառավարմանը, առավելագույն զբաղվածության ապահովմանը, սղաձի ծրագրային մակարդակի ձեռքբերմանը, ՀՆԱ և տնտեսական աճի խթանմանը:

Կատարելով հարկային մուտքերի և պետության կողմից պահանջվող ֆինանսական ռեսուրսների քանակական համադրում՝ կարելի է գնահատել հարկաբյուջետային համակարգի աշխատանքի արդյունավետությունը, ինչպես նաև կանխատեսել տնտեսական գործընթացների ուղղությունները և համապատասխան փոփոխություններ ու ճշգրտումներ կատարել այդ ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ:

Հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը պետք է միտված լինի տնտեսության աշխուժացմանը և ենթադրի այնպիսի մոտեցումների կիրառում, որոնց առկայությունը կհանգեցնի տվյալ քաղաքականությամբ պայմանավորված գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը: Հարկային հավասարակշռված քաղաքականության իրականացման կարևոր գործոն է հարկային դրույքաչափերի և հարկման օբյեկտների մեծությունների փոխկապվածությունը: Որպես կանոն, հարկման օբյեկտների նվազեցման քաղաքականությունը զուգակցվում է հարկադրույքների բարձրացմամբ, իսկ ընդլայնումը՝ իջեցմամբ: Այդ առումով, հարկային քաղաքականության կարևորագույն խնդիրներից է առանձին հարկատեսակների գծով հարկման օբյեկտների և համապատասխան դրույքաչափերի այնպիսի համամասնությունների սահմանում, որոնց առկայության պայմաններում դրանց ընդհանուր մակարդակների հարաբերակցությունը չի հանգեցնի արտադրության ծավալների անկման և պետական բյուջեի մուտքային մասի կրճատման:

Հարկաբյուջետային քաղաքականությունների համակարգումը տեղի է ունենում միջնաժամկետ, տարեկան, եռամսյակային, ամսական և շաբաթական ծրագրերի մշակման, ճշգրտման և իրականացման գործընթացում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը համարվում է նոր շուկայական տնտեսություն ձևավորող երկիր: Այսինքն՝ մեր երկրի տնտեսությունը վարչահրամայականից շուկայական հարաբերություններին ոչ շատ վաղուց է անցում կատարել: Այս պարագայում մեծ նշանակություն ունի հարկաբյուջետային քաղաքականությունը, որը մակրոտնտեսական կայունացման գոր-

ծիք է համարվում: ԼՂՀ ֆիսկալ քաղաքականությունը ձևավորվել է անկախության հենց առաջին տարիներին: Այն մեծ դեր է խաղում սոցիալական, տնտեսական, կառուցվածքային, ներդրումային, հարկային, բյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործում, որոնք տնտեսավարող սուբյեկտների համար առավել բարենպաստ պայմաններ են ստեղծում:

ԼՂՀ հարկաբյուջետային քաղաքականության մշակման ընթացքում էական նշանակություն ունեցան պետության միջամտության ուղղակի ձևից անուղղակիին անցնելը, պետական ծախսերի նոր սկզբունքով ձևավորումը:

Այսպես՝ ԼՂՀ-ում պետական ծախսերի տեսակարար մեծ կշիռ սկսեցին կազմել լրահատկացումները, սոցիալական, նաև տնտեսության խթանմանը նպաստող ծախսերը: ԼՂՀ տնտեսության զարգացման յուրաքանչյուր փուլում դրա վրա ազդող գործոնների հաշվառումը պետք է ստեղծի պետական ծախսերի այնպիսի համակարգ, որը կհամապատասխանի տնտեսության պահանջներին, տիպին ու կառավարման աստիճանին:

ԼՂՀ հարկաբյուջետային քաղաքականության հեռանկարային հիմնախնդիրները կարևոր նշանակություն ունեն մեր երկրի տնտեսական կյանքում, և դրանց լուծման եղանակներն ու մոտեցումները արտացոլված են պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում:

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ԼՂՀ Կառավարության նպատակների իրագործման հիմնական գործիքներից մեկն է:

Սույն ծրագրի հարկաբյուջետային քաղաքականությանը վերաբերող մասը ներկայացնում է ԼՂՀ Կառավարության ընդհանուր երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքները, միջնաժամկետ և կարճաժամկետ հարկաբյուջետային ցուցանիշները և ռազմավարական ծախսային գերակայությունները: Դրանք տնտեսական և հարկաբյուջետային այն չափանիշներն են, որոնք պետական բյուջեի նախագծի մշակման հիմքն են կազմում:

Ընդունելով կայուն հարկաբյուջետային քաղաքականության անհրաժեշտությունը՝ ԼՂՀ Կառավարությունը 2014–2016 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման ընթացքում առաջնորդվել է ԼՂՀ նախագահի նախընտրական և Կառավարության գործունեության ծրագրերում ամրագրված հարկաբյուջետային սկզբունքներով: Քանի որ բյուջետային մուտքերի սղությունը և ելքերի վրա ազդող գործոնները սահմանափակում են կարճաժամկետ հեռանկարում նշված սկզբունքների իրագործման հնարավորությունները, ԼՂՀ Կառավարությունը մտադիր է կիրառել այդ սկզբունքները երկարաժամկետ հեռանկարում: Դրանք հիմք կծառայեն ընթացիկ քաղաքականությունների և Կառավարության երկարաժամկետ նպատակների համաձայնեցվածությունը գնահատելու համար¹:

Կառավարությունն առկա ծախսային գերակայությունները համադրել է երկարաժամկետ հարկաբյուջետային սկզբունքների հետ՝ հաջորդ 3 տարիների ընդհանուր ծախսային մակարդակը որոշելու համար:

Համախառն ներքին արդյունքի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների հարաբերության ցուցանիշը 2014–2016 թվականներին կտատանվի 40.0–40.8 տոկոսի սահմաններում, իսկ ներքին ռեսուրսների հաշվին ձևավորվող (սեփական) եկամուտների դեպքում՝ 17.4–17.5 տոկոսի սահմաններում:

¹ Տես «Բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենք:

Հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային ծավալները՝ ԼՂՀ Կառավարությունը ծրագրում է 2014–2016 թվականների ծախսերի տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ 40.0–42.8 տոկոսի սահմաններում²:

Վերջին տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես՝ 2008–2012 թվականներին միջինում գրանցվել է համախառն ներքին արդյունքի 10.4% իրական աճ: Այդ տարիների տնտեսական աճին նպաստել են տնտեսության բոլոր ճյուղերը, առավելապես ծառայությունների մատուցման ոլորտը՝ միջինում 7.4 տոկոսային կետով, գյուղատնտեսության ոլորտը՝ 1.5 տոկոսային կետով: Հատկանշական է, որ նշված տարիների ընթացքում բնակչության բարեկեցությունը բնութագրող՝ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ մեծությունը կրկնապատկվել է, իսկ արտադրողականությունը բնութագրող՝ մեկ աշխատողին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճել է շուրջ 80.0%-ի չափով:

2014–2016 թթ. հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1

Պետական եկամուտների քաղաքականության հիմնական առանձնահատկությունները 2014–2016 թթ.

Ցուցանիշներ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
	փաստացի					ստացվող	կանխատեսում			
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	70791	87148	102339	118187	135499	150016	168400	189100	212300	238300
Տնտեսական աճ (%)	8.8	14.3	13.1	5.5	9.1	9.9	9.0	9.0	9.0	9.0
ՀՆԱ դեֆլատոր (%)	5.1	7.8	3.9	9.5	5.1	0.7	3.0	3.0	3.0	3.0
Գնաձև նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)	8.2	5.7	5.1	10.6	4.0	3.0	5.0	4.0+/-1.5	4.0+/-1.5	4.0+/-1.5

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի առանցքային հարցերից են պետական եկամուտների քաղաքականության ուղղվածությունը և դրանց կանխատեսելիությունը միջնաժամկետ հեռանկարում: Հաշվի առնելով, որ պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են հարկային եկամուտներն ու պետական տուրքերը՝ առավել ընդգծվում է հարկային քաղաքականության դերը³:

2014–2016 թվականների պետական եկամուտների քաղաքականությունը կիրականացվի ԼՂՀ Ազգային ժողովի հավանությանն արժանացած, Կառավարության ծրագրով ամրագրված սկզբունքներին համապատասխան:

² Տե՛ս ԼՂՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, 2014–2016 թթ.:

³ Տե՛ս նույն տեղը:

Մասնավորապես, 2014–2016 թվականներին հարկային քաղաքականության գերակա ուղղությունները կլինեն.

- հարկային եկամուտների հավաքագրման վարչարարության արդյունավետության մակարդակի բարձրացումը,
- հարկային հսկողության արդյունավետության մեծացումը՝ ռիսկային տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցումների կիրառմամբ,
- փոքր և միջին գործարարության համար պարզեցված հարկային դաշտի ապահովումը և հարկային բեռի շարունակական անցումը խոշոր հարկ վճարողներին,
- հարկային վարչարարության պարզեցումը, էլեկտրոնային հաշվետվական համակարգի ներդրումը՝ նպատակ ունենալով ապահովելու էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների լայնածավալ ներկայացումը,
- ստվերի դեմ պայքարի նոր մեխանիզմների կիրառումը:

2014–2016 թվականների հարկային օրենսդրության փոփոխությունները, հարկային մարմինների կողմից այդ ժամանակաշրջանում իրականացվելիք վարչարարական միջոցառումները միտված կլինեն վերոնշյալ սկզբունքներն արտացոլող նպատակների հասանելիության, ինչպես նաև 2014–2016 թվականների համար սույն փաստաթղթով նախատեսված հարկային եկամուտների ծրագրային մակարդակի ապահովմանը:

ԼՂՀ 2014–2016 թվականների պետական բյուջեների սեփական եկամուտները կանխատեսվել են, համապատասխանաբար՝ 33.0 մլրդ դրամի, 37.0 մլրդ դրամի և 41.4 մլրդ դրամի չափով: Եկամուտների տարեկան ծրագրային ծավալները կապահովվեն հիմնականում ի հաշիվ հարկային եկամուտների և պետական տուրքերի:

2014 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ԼՂՀ օրենքները, իսկ նշված վճարների փոխարեն գործում է միասնական եկամտային հարկը: Ըստ գնահատականների՝ օրենսդրական այս փոփոխության ազդեցությունը բյուջետային եկամուտների վրա կլինի չեզոք. նոր հարկատեսակից՝ եկամտային հարկից կապահովվեն եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերի հանրագումարին համարժեք ծավալից ոչ պակաս ծավալով մուտքեր: Սա նշանակում է, որ այս օրենսդրական փոփոխության կիրարկման արդյունքում պարտադիր սոցիալական ապահովության վճարների ծրագրային մակարդակի չափով կավելանան հարկային եկամուտների կանխատեսվող ծավալները, իսկ պետական բյուջեի եկամուտների ընդհանուր ծավալը չի փոխվի: Ուստի 2014–2016 թվականների համար հարկերից և պետական տուրքերից մուտքերը ծրագրվել են 2013 թվականի համար հաստատված՝ հարկերի և պետական տուրքերի, ինչպես նաև պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերի ծրագրային ցուցանիշների հանրագումարի հիման վրա⁴.

⁴ Տե՛ս www.tax.nk.am:

Աղյուսակ 2

Եկամտատեսակը	2014	2015	2016
Պետական բյուջեի եկամուտներ, ընդամենը	77,090.8	85,165.5	95,208.9
Պետական բյուջեի սեփական եկամուտներ, այդ թվում.	33,000.0	37,000.0	41,400.0
հարկային եկամուտներ և պետական տուրք	31,300.0	35,300.0	39,700.0
այլ եկամուտներ	1,700.0	1,700.0	1,700.0

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով 2014–2016 թվականների բյուջետային մուտքերը ծրագրվել են «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի մակարդակը 16.6–16.7 տոկոսի չափով պահպանելու սկզբունքի հիման վրա⁵:

Հաշվարկներում լրացուցիչ ենթադրվել է, որ հարկերի գծով 2013 թ. համար ծրագրված «հարկեր/ՀՆԱ» ցուցանիշի ծրագրային մակարդակն իրատեսական է, և առկա օրենսդրական նախադրյալները, կիրառվելիք վարչարարական միջոցառումները, ինչպես նաև մակրոտնտեսական զարգացումները բավարար հիմքեր կստեղծեն այն ապահովելու համար:

2014–2016 թվականների հարկերի հավաքագրման առաջարկվող մակարդակների իրատեսական լինելը գնահատելու համար անհրաժեշտ է դիտարկել այն բնութագրող մի քանի ցուցանիշներ.

Աղյուսակ 3

Ցուցանիշներ	2013	2014	2015	2016
	Ծրագիր		Կանխատեսում	
Հարկեր (մլն դրամ)	28,000.0	31,300.0	35,300.0	39,700.0
աճը նախորդ տարվա նկատմամբ (%)	106.9	111.8	112.8	112.5
հարաբերությունը ՀՆԱ-ի նկատմամբ (%)	16.6	16.6	16.6	16.7

Հարկաբյուջետային քաղաքականությունը երկրի տնտեսության համար կարող է թե՛ խթան, թե՛ խոչընդոտ դառնալ: Ուստի համապատասխան լծակների կիրառումից առաջ անհրաժեշտ է համակողմանի ուսումնասիրության ենթարկել տնտեսության վրա ներազդման բոլոր հնարավոր տարբերակները և հավուր պատշաճի ուսումնասիրել այդ քաղաքականության փոխանցման շղթաները:

Հարկաբյուջետային քաղաքականության գլխավոր գործիքներից մեկը պետական ծախսումներն են, որոնց ազդեցությունը էապես կախված է տնտեսական իրավիճակից:

Վերջին շրջանում ողջ աշխարհում ակտիվացել են պետական պարտքի կառավարման խնդիրներին վերաբերող քննարկումները: Տնտեսագետներն ու քաղաքական գործիչները միահամուռ ուժերով փորձում են պարտքային խնդիրների չեզոքացման հնարավոր ուղիներ որոնել՝ հատկապես այն երկրներում, որտեղ պարտքային ձգնաժամի դրսևորումներ են նկատվում: Եվ հենց այս համատեքստում պետք է ուսումնասիրվեն նաև հարկաբյուջետային քաղաքականության և պետական պարտքի փոխկապվածության հիմնահարցերը:

⁵ Տե՛ս www.minfin.nkr.am

Տնտեսագետներին հատկապես հետաքրքրում է հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության վրա:

Իրական ՀՆԱ-ի՝ մասնավոր ներդրումների և առևտրային հաշվեկշռի տվյալների հիման վրա կատարած վերլուծությունը ցույց է տվել, որ հարկաբյուջետային գործիքների կիրառումը, իրական ՀՆԱ-ի առումով, դրական արդյունք է տալիս, երբ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը չափավոր է, իսկ երբ սկսում է կտրուկ ավելանալ, իրականացվող քաղաքականությունը դառնում է անարդյունավետ: Հետազոտության արդյունքները վկայում են նաև, որ որքան մեծ է պարտքի մակարդակը, այնքան դա ավելի լավ է առևտրային հաշվեկշռի տեսանկյունից:

Բոլոր ժամանակներում տնտեսագիտական միտքը փորձել է գտնել մակրոտնտեսական կարգավորման ամենարդյունավետ գործիքը: Տնտեսագետները մինչ օրս բանավիճում են, թե հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններից ո՞րն է առավել արդյունավետ:

1930-ականներին Զ. Քեյնսը հիմնավորեց ձգնաժամի պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության առավելությունները, մինչդեռ Մ. Ֆրիդմանի պնդմամբ՝ ձգնաժամը դրամական զանգվածի նվազմամբ էր պայմանավորված, ուստիև առաջարկում էր կիրառել մոնետար լծակներ: Քեյնսյան բազմարկչի աշխատանքի արդյունավետությունը ապացուցվել է ոչ միայն տեսականորեն, այլև 1930-ականների կամ 70-ականների ԱՄՆ տնտեսության օրինակով: Ավելին՝ 2008–09 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ձգնաժամը մեկ անգամ ևս ցույց տվեց խթանիչ հարկաբյուջետային քաղաքականության կենսունակությունը. այն երկրներում, որտեղ չկիրառվեցին ֆիսկալ գործիքներ, ձգնաժամի ազդեցությունը ավելի զգալի եղավ (օրինակ՝ Մեծ Բրիտանիա), քան խթանիչ հարկաբյուջետային քաղաքականություն կիրառած երկրներում: Հատկանշական է, որ ԼՂՀ Կառավարությունը ևս ձգնաժամի տարիներին օգտագործեց խթանիչ լծակները, ինչը, անկասկած, մեղմեց ֆինանսատնտեսական ձգնաժամի ազդեցությունը ԼՂՀ տնտեսության վրա⁶:

Բնականաբար, հարկ է ընդգծել, որ հարկաբյուջետային քաղաքականությունը նաև անորոշություն է պարունակում: Օրինակ՝ ոչ ոք չի կարող կանխատեսել, թե հարկերի կրճատման միջոցով իրականացվող խթանիչ գործողությունների արդյունքում ավելացված տնօրինելի եկամտի որքան մասը կծախսվի, որքանը՝ կխնայվի:

Այսպիսով՝ Մեծ դեպրեսիայից մինչ օրս համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը, թերևս, փաստում է, որ կարճաժամկետ հատվածում ֆիսկալ գործիքների կիրառումը կարող է առավել արդյունավետ լինել, քան դրամավարկային խթանիչ քաղաքականությունը:

Հարկաբյուջետային քաղաքականության հիմնական մարտահրավերներով պայմանավորված՝ խիստ կարևորում ենք հետևյալ խնդիրները.

- Ստվերային տնտեսության և երկրի արտադրական ներուժի գնահատումը:

Հարկաբյուջետային արդյունավետ քաղաքականության իրականացումը, առանց ՀՆԱ ներուժային և ստվերային մակարդակների գնահատման, զրեթե անհնար է:

⁶ Տե՛ս www.armef.com

- Ստացված գնահատականների հիման վրա հարկաբյուջետային քաղաքականության ուղղվածության գնահատումը կառուցվածքային և պարբերաշրջանային պակասուրդների հաշվարկման միջոցով:

- Հարկերի և ծախսերի կառուցվածքի ճիշտ սահմանումը և դրանց արդյունավետության մակարդակի բարձրացումը: Խնդրի ծավալներից և բարդությունից կախված՝ այս փուլում հարկ է կենտրոնանալ բյուջեի որոշակի ոլորտի ծախսերի արդյունավետության ուսումնասիրության և այդ ոլորտում ծրագրային բյուջետավորման միջոցով վերջինիս բարձրացման հիմնախնդիրների վրա:

- Ծրագրային բյուջետավորման պարագայում հիմնական ուշադրությունը սևեռվում է բյուջետային հատկացումների շնորհիվ ստեղծված արդյունքին, ինչը թույլ է տալիս մեծացնել ռեսուրսների օգտագործման շրջանակը: Այս առումով էլ նշված մեթոդը տարբերվում է ավանդական կամ մուտքային բյուջետավորումից:

- Ծրագրային բյուջետավորման պարագայում բյուջեում հիմնական շեշտադրումը՝ «ի՞նչ ռեսուրսներ են հարկավոր պետական մարմիններին» հարցից տեղափոխվում է «ի՞նչ է մատակարարվում հանրությանը (որքա՞ն և ի՞նչ որակով), ինչո՞ւ է դա մատակարարվում» հարցերին: Ծրագրային բյուջետավորման բարեփոխման արդյունքում չի փոխվում ծրագրերի բովանդակությունը (վարվող քաղաքականությունը), սակայն հստակեցվում է տեղեկատվությունը վարվող քաղաքականության և հատկացված բյուջեի վերաբերյալ, ինչը նպաստում է արդյունավետության աճին: Այս դեպքում բարելավվում է հաշվետվության համակարգը, այսինքն՝ պետական մարմինները պատասխանատվություն են կրում իրենց մատուցած ծառայությունների/արդյունքների համար, իսկ հաշվետվության հստակությունը ռեսուրսների կառավարման հարցում ավելի մեծ ձկունություն է ապահովում:

- Կենտրոնացված ծրագրավորումից շուկայական հարաբերություններին անցում կատարող երկրներում հարկային քաղաքականության ձևավորման վրա ազդում են նաև անցման բուն գործընթացով պայմանավորված գործոններ: Մասնավորապես՝ արտադրանքի քանակի և գնի վերաբերյալ հստակ տեղեկատվության բացակայությունը հարկումից խուսափելու մեծ հնարավորություններ է ստեղծում: Շատ երկրներում դեռևս չի կարևորվում այն հանգամանքը, որ շուկայական տնտեսության պայմաններում հարկային համակարգը պետք է ունենա մեկ հիմնական նպատակ՝ առավելագույն արդյունավետությամբ և արդարությամբ եկամուտների հավաքագրում: Փոխադրենք հարկային համակարգի միջոցով հաճախ լուծվում են այնպիսի խնդիրներ, ինչպես՝ վնասաբեր ընկերությունների գործունեության, այդ ընկերություններում հարկերի փոխարեն աշխատավարձերի վճարումը թույլատրելով՝ զբաղվածության և տնտեսական ակտիվության պահպանումը: Իսկ նման արտոնյալ վերաբերմունքի չարժանացող հատվածի համար հարկման բեռն անարդարացիորեն ավելի բարձր է ստացվում՝ դրանով իսկ խաթարելով հարկման հիմնարար սկզբունքները:

- Մակրոտնտեսական առումով, հարկային քաղաքականության ձևավորման կարևոր խնդիրները հարկման ընդհանուր մակարդակի (որը որոշվում է ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների հարաբերությամբ) և հարկման կառուցվածքի (եկամտային ու սպառման հարկերից ստացվող եկամուտների հարաբերակցության) հարցերն են:

- Հարկման լավագույն մակարդակի վերաբերյալ քննարկումները հաճախ կառուցվում են միջազգային համեմատությունների հիման վրա՝ հաշվի առնելով համեմատվող երկրների հիմնական առանձնահատկությունները: Հարկման մակարդակը պայմանավորող ցուցանիշների վերաբերյալ կատարված բազմաթիվ ուսումնասիրություններում ամենահաճախ օգտագործվող ցուցանիշը մեկ շնչին բաժին ընկնող եկամուտն է՝ պայմանավորված ինչպես տնտեսական զարգացմանը համընթաց պետական ծախսերի նկատմամբ աճող պահանջարկով, այնպես էլ դրա բավարարման համար հարկահավաքման պատշաճ մեխանիզմների զարգացմամբ: Այս գործոնները հանգեցնում են հարկման մակարդակի ու տնտեսական զարգացման միջև դրական կապի առկայությանը:

- Մակրոտնտեսական առումով, հարկային քաղաքականության ձևավորման մյուս կարևոր խնդիրը հարկման կառուցվածքն է՝ սպառման կամ եկամուտների հարկում:

- Ավանդաբար ընդունվում է, որ բարեկեցության համար ավելի ծախսատար է եկամուտների հարկումը, քանի որ սա ներառում է ինչպես աշխատանքի, այնպես էլ կապիտալի հարկում, և քանի որ աշխատանքի հարկումը ժամանակի ընթացքում նշանակում է սպառման հարկում, ապա դա հանգեցնում է խնայողությունների հարկման, որը, փաստորեն, բացակայում է սպառման հարկման դեպքում:

- Սպառման հարկերն, ըստ էության, ավելի ռեգրեսիվ են, և փորձը ցույց է տալիս, որ նման հարկերի առումով պրոգրեսիվության աստիճանի բարձրացման փորձերը դատապարտված են անհաջողության: Նշենք նաև, որ զարգացած երկրներում հարկային եկամուտների հիմնական աղբյուր են եկամտային հարկերը, իսկ զարգացող երկրներում հարկումը հիմնականում կատարվում է ըստ սպառման հարկերի:

- Ներդրումների ներգրավման հարցում հնարավոր բոլոր գործիքները կիրառելու ջանքերը հաճախ ավարտվում են հարկային մեծածավալ արտոնությունների կիրառմամբ: Այս դեպքում ռազմավարության առաջնային տարրեր պետք է լինեն իրավական համակարգի և պատշաճ ենթակառուցվածքների ապահովումն ու միջազգային չափանիշներին համապատասխան հարկային համակարգի ձևավորումը:

Ամփոփելով հարկ է նշել, որ հարկային քաղաքականության ռազմավարությունը պետք է պայմանավորված լինի երկրի տնտեսական զարգացման գերակայություններից՝ ուղղված հարկային այնպիսի համակարգի ձևավորմանը, որը կստեղծի տնտեսական աճի բարձր ու կայուն տեմպերի, ներդրումների իրականացման և տնտեսության արտահանող ձյուղերի զարգացման բարենպաստ միջավայր, այլ կերպ ասած՝ պետք է միտված լինի տնտեսության զարգացման անհրաժեշտ նախադրյալների ստեղծմանը, որոնցից բխող ընդհանուր տնտեսական քաղաքականությունն էլ կապահովի ցանկալի արդյունք:

Այսպիսով՝ հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման նպատակով անհրաժեշտ է.

Հարկային քաղաքականության ոլորտում՝

- ձևավորել արդարության և համահավասարության սկզբունքով գործող հարկային համակարգ.

- անողոք և վճռական պայքար ծավալել ստվերային տնտեսության դեմ. տնտեսավարող սուբյեկտների կողմից կեղծ վնասներ ցույց տալու արատավոր երևույթի դեմ պայքարելու նպատակով ծախսային ուրոշ հողվածների (գովազդային, ներկայացուցչական, խորհրդատվական, իրավաբանական և այլն) պարագայում կիրառել նորմավորման սկզբունքը.
- օրենսդրորեն ամրագրել լայն սպառման առաջին անհրաժեշտության ապրանքների ու բնական մենաշնորհի հանդիսացող ծառայությունների (որոնցով ձևավորվում է սպառողական նվազագույն զանքյուղի արժեքը) սակագների սահմանման, ինդեքսավորման, անհրաժեշտության դեպքում՝ հարկային արտոնությունների սկզբունքները.
- նվազագույնի հասցնել օրենսդրական փոփոխությունների քանակը, մեծացնել դրանց մասին հասարակության տեղեկացվածության աստիճանը, անհրաժեշտ փոփոխությունների մշակման գործընթացում ներգրավել տնտեսավարող սուբյեկտների շահերը ներկայացնող միություններին և հասարակական կազմակերպություններին:

Բյուջետային քաղաքականության ոլորտում՝

- բյուջետային գործընթացները դարձնել ավելի բաց ու թափանցիկ.
- անցում կատարել զարգացման բյուջեներին՝ հստակորեն սահմանազատելով ծախսերի այն մասը, որը նպատակաուղղվելու է զարգացման հեռանկարային ծրագրերի իրագործմանը.
- պետական և համայնքային բյուջեների բոլոր միջոցների բաշխումն իրականացնել արդյունքների վրա հիմնված ծրագրային բյուջետավորման սկզբունքով.
- կատարելագործել գանձապետական համակարգը, պետական ֆինանսների հաշվառումն ու վիճակագրությունը.
- էապես բարեփոխել պետական գնումների համակարգը, որպեսզի բացառվեն կոռուպցիոն երևույթներն ու պետական բյուջեի միջոցների անարդարացի բաշխումը.
- մեծացնել բյուջետային ծախսումների արդյունավետությունը.
- ապահովել տնտեսության զարգացման գերակայություններին համապատասխանող ներդրումային ծրագրերին պետության մասնակցությունը:

ЗАВЕН МИРЗОЯН*Аспирант кафедры**„Финансов и бухгалтерского учета” АрГУ*

Роль налогово-бюджетной политики в государственном регулировании экономики.- В деле стабилизации экономики, обеспечения прогресса, решения вопросов различного характера особенно важную роль играет налогово-бюджетная система страны.

Это, конечно, предполагает разработку и применение такой фискальной политики, которая будет способствовать повышению предпринимательской деятельности, активизации инвестиционного процесса, свободной конкуренции, и, в конечном счете, обеспечению устойчивых темпов экономического роста.

Налогово-бюджетная политика должна быть основана на приоритетах экономического развития страны, направлена на формирование такой налоговой системы, которая обеспечит высокие и устойчивые темпы экономического роста, благоприятную среду для инвестиций и развития экспортных отраслей экономики. Другими словами, она должна быть направлена на создание необходимых условий для экономического развития, из которых вытекает экономическая политика, ведущая к желаемым результатам.

ZAVEN MIRZOYAN*Post-graduate at the Chair of**„Finance and Accounting” at ArSU*

The Role of Fiscal Policy in the State Regulation of Economy.- The fiscal system of the country plays an important role in the economy's stabilization, ensuring progress and solution of various issues.

This, of course, involves the development and application of such a fiscal policy that will promote entrepreneurship, encourage investment and free competition, and finally, ensure sustainable economic growth.

Fiscal policy should be based on the priorities of economic development of the country. It should form such a tax system that will provide high and stable economic growth, create favorable investment climate and develop export sector of economy. In other words, it should be aimed at creating the necessary conditions for economic development, which imply economic policies, leading to the desired results.